ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 14-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ արտահերթ ավագանու նիստ գումարելու մասին գրավոր առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 2-ի արտահերթ նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 83-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամ՝ Սյուզաննա Մնոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին (արձանագրություն)

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԳՈՌ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄՀԵՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՄՆՈՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՊՈՂՈՍՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 15-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով , Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 83-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
- որոշման 1-ին կետում « փետրվարի 16-ը » բառերը փոխարինել « փետրվարի 15 » բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԳՈՌ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՀԵՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՄՆՈՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 1

(ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու «Հզոր համայնք » դաշինք խմբակցության անդամ Սյուզաննա Կարապետի Մնոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին)

02 փետրվարի 2023թ. գ.Ծաղկահովիտ

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավար Նորաին Մխիթարի Հակոբյանս ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով կազմեցի սույն արձանագրությունը այն մասին, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու «Հզոր համայնք » դաշինք խմբակցության անդամ Սյուզաննա Կարապետի Մնոյանը 2023 թվականի հունվարի 25-ին դիմում է ներկայացրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին հայտնելով, որ չի ցանկանում շարունակել ավագանու անդամի իր հետագա գործունեությունը, հրաժարվում է ավագանու անդամի մանդատից և խնդրել է օրենքով սահմանված կարգով դիմումը հրապարակել ավագանու առաջիկա նիստում : 2023 թվականի հունվարի 30-ին Ծաղկահովիտ համայնքի ավագանու «Հզոր համայնք » դաշինք խմբակցության ղեկավարը գրությամբ դիմել է համայնքի ղեկավարին հայտնելով, որ «Հզոր համայնք » դաշինք խմբակցությունը ավագանու անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ առաջարկում է 02.02.2023թ. գումարել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 83-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
2. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամ՝ Սյուզաննա Մնոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Ծաղկահովիտ համայնքի ղեկավարը հիմք ընդունելով «Հզոր համայնք » դաշինք խմբակցության գրավոր առաջարկությունը ավագանու արտահերթ նիստ նշանակել է 2023 թվականի փետրվարի 2-ին : Ավագանու արտահերթ նիստի ընթացքում հրապարակվել է Սյուզաննա Մնոյանի ավագանու անդամի մանդատից հրաժարվելու մասին դիմումը, այն

քննարկվել է, վերջինս պնդել է , որ հրաժարվում է ավագանու մանդատից: Քննարկման ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու «Հզոր համայնք » դաշինք խմբակցության անդամ Սյուզաննա Կարապետի Մնոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին առարկություններ և առաջարկություններ չեն եղել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 4-րդ մասի պահանջներով, Ծաղկահովիտ համայնքի ղեկավարն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու «Հզոր համայնք » կուսակցությունների դաշինք ընտրական ցուցակից ընտրված Սյուզաննա Մնոյանի լիազորությունները համարել վաղաժամկետ դադարած:

2. Ավագանու անդամ Սյուզաննա Մնոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին կազմված արձանագրությունը օրենքով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Արձանագրությունը կազմեց՝ Ա.Ավետիսյան

Համայնքի ղեկավար՝ Ն.Հակոբյան